ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 3

Հայտերի գնահատման նիստի

«Սպանդարյան և Ծամբ ՀԷԿ-երի համար հիդրոգեներատորի կրնկակալի սեգմենտների մատակարարում » ապրանքների ձեռքբերման ստացված հայտերի վերջնական գնահատման նիստի

Գնման ծածկագիրը - **ՔԳՀԿ 15/25**
Գնման տեսակը - **բաց մրցույթ**
Գնումը ներառված է ՔԳՀԿ 2025-2027թթ. ներդրումային ծրագրում 6-րդ հավելվածում

2026թ. փետրվարի 20-ին, Ժամը՝ 16:30-ին Ք. Գորիս, ՀՀ

Նիստին մասնակցում են՝	
Հանձնաժողովի նախագահ	Արամ Մելքումյան
Հանձնաժողովի անդամներ՝	Գավրուշա Աթայան Արթուր Մովսիսյան Արտաշես Գրիգորյան Արմինե Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան

1. Արման Պետրոսյանը տեղեկացրեց գնահատող հանձնաժողովի անդամներին, որ «Վահե Թոխսանց» ԱՁ-ի և «Voith Hydro GmbH & Co. KG»-ի կազմակերպությունները ս.թ. նոյեմբերի 24-ին ժամը 15:30 Coupa համակարգում հրավիրվել էին աճուրդի: Աճուրդի ընթացքում «Voith Hydro GmbH & Co. KG»-ի գնային առաջարկը նվազեց 3,966 ԱՄՆ դոլարի չափով և կազմեց 260,384 ԱՄՆ դոլար իսկ «Վահե Թոխսանց» ԱՁ-ն կիրառեց զեղչ 1,000,000 ՀՀ դրամ, որի արդյունքում գինը կազմեց 69,000,000 ՀՀ դրամ:

2. Ստորև ներկայացված է աճուրդի արդյունքները:

N	Մասնակից	Աճուրդի արդյունքներ	ՀՀ դրամ համարժեք
1	«Վահե Թոխսանց» ԱՁ	69,000,000 ՀՀ դրամ	69,000,000
2	«Voith Hydro GmbH & Co. KG»	260,384 ԱՄՆ դոլար	104,153,600



3. Հաշվի առնելով աճուրդի արդյունքները առաջարկվեց հրավիրել «Վահե Թոխսանց» ԱՁ-ին գնի նվազեցման շուրջ բանակցությունների, քանի որ գերազանցում է նախահաշվային արժեքը 30,300,000 ՀՀ դրամի չափով, (նախահաշվային գինը 38,700,000 ՀՀ դրամ): 2025թ. նոյեմբերի 25-ին ժամը 15:00 կայացած բանակցությունների ընթացքում, քննարկվեցին ծախսերի նվազեցմանը նպաստող առաջարկություններ. մասնավորապես, տեղական մասնագետների ներգրավման, մատակարարման ժամանակացույցի օպտիմալացման, սարքավորումների զեղչային տարբերակները: Սակայն «Վահե Թոխսանց» ԱՁ-ն տեղեկացրեց, որ հաշվի առնելով սարքավորման որակական պահանջները լրացուցիչ զեղչ հնարավոր չե առաջարկել:
4. Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովի անդամները միաձայն որոշեցին հաղթող ճանաչել «Վահե Թոխսանց» ԱՁ-ն և առաջարկել կնքել պայմանագիր առաջարկված 69,000,000 (վաթսուն ինը միլիոն) ՀՀ դրամի չափով, (առանց ԱԱՀ)՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից մրցույթի արդյունքները հաստատելուց և ընկերության ներքին քաղաքականության համաձայն համապատասխանության և ներքին բոլոր հաստատումները անցնելուց հետո:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների միաձայն համաձայնվեցին առաջարկներին:

Հանձնաժողովի նախագահ	Արամ Մելքումյան	
Հանձնաժողովի անդամներ՝	Գավրուշա Աթայան	
	Արթուր Մովսիսյան	
	Արտաշես Գրիգորյան	

	Արմինե Մանուկյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան	